ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՐՑՈՒՄՆԵՐԻ
ՄԻԱՍՆԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ

h.2338443
30-10-2026թ.
Նախընտրած ծանուցման ձևը՝
Էլ.փոստի միջոցով

Հասցեատեր՝ *Հայաստանի Հանրապետության*
Լոռու մարզպետի աշխատակազմ

Դիմող՝ *ՄԱՐԻԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ*
ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
Հասցե՝ *ԼՈՌԻ, , ՍՊԻՏԱԿ,*
ԹՈՐՈՍՅԱՆ Փ., 22ա/5,
msahakyan.arkat@gmail.com : 37499971111

ՀԱՐՑՈՒՄ

ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն՝ խնդրում եմ տրամադրել տեղեկություններ.

Իրավաբանական օգնություն ստանալու նպատակով դիմել է ՀՀ քաղաքացի, Լոռու մարզի Սպիտակ համայնքի բնակիչ՝ *Հովիկ Համբարձումի Տոնոյանը*, ով հայտնեց, որ 1988 թվականի դեկտեմբերի 7-ին տեղի ունեցած երկրաշարժի հետևանքով իր ընտանիքը (գլխավորող՝ Արմանուշ Մեսրոպի Մկրտչյանը, մահացած) դարձել է անօթևան, որից հետո նրանք մշտապես և մինչ օրս հաշվառված են ՀՀ, Լոռու մարզի Լեռնավան համայնքի՝ աղետի հետևանքով անօթևան մնացած անձանց հերթացուցակում: Քաղաքացու պնդմամբ ինքը մինչ օրս որևէ տեղեկություն չունի իր բնակարանային գործի ընթացքի վերաբերյալ, այդ թվում՝ չունի տեղեկություններ, թե արդյո՞ք ընտանիքը շահառու ճանաչվել է թե ոչ, կամ արդյո՞ք առկա է ընտանիքի մասով կայացված միջամտող վարչական ակտ թե ոչ, քանի որ որևէ փաստաթուղթ ինքը, կամ ընտանիքի որևէ անդամ չի ստացել:

Հաշվի առնելով վերոգրյալը, խնդրում եմ ինձ տրամադրել տեղեկություններ Վստահորդիս ընտանիքի բնակարանային գործի ընթացքի վերաբերյալ, այդ թվում՝ եթե առկա է ընտանիքի մասով կայացված միջամտող վարչական ակտ, ապա խնդրում եմ տրամադրել դրա օրինակը և հայտնել, թե ի՞նչ պատճառով այն չի հանձնվել Վստահորդիս կամ նրա ընտանիքի անդամներին, եթե հանձնվել է ապա խնդրում եմ պատասխանին կցել վարչական ակտը հասցեատերերին հանձնելու վերաբերյալ ապացույցը:

Միաժամանակ խնդրում եմ հարցման պատասխանը և կից փաստաթղթերը ուղարկել թղթային տարբերակով՝ ՀՀ, Լոռու մարզ, քաղաք Սպիտակ, Թորոսյան 22ա/5 հասցեով:

Կից ներկայացնում եմ՝ Հովիկ Տոնոյանի անձը հաստատող փաստաթուղթը, լիազորագիրը, փաստաբանի արտոնագիրը:

Digitally signed by ՄԱՐԻԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ
7410960302
2026-10-30 10:38:37 GMT+04:00

Պատրաստ եմ վճարել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված սահմանաչափը գերազանցող տեղեկության տրամադրման համար:

Կից՝ 3 ֆայլ

Դիմող՝

ՄԱՐԻԱՄ ՍԱՀԱԿՅԱՆ